ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1950 *Общественные науки*

Լ. ԲԱՏՈՒ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

1950 թ. հոկտեմբերի 2-ին կայացավ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի դիտական խորհրդի ընդլայնված նիստը։

Նիստում քննարկվեց «Սովետական Հայաստանի պատմության ուրվագծերը» աշխատությունը, որը բաղկացած է հետևյալ բաժիններից. 1. «Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում» (հեղինակ՝ պատմ. դիտ. թեկնածու Հ. Էլչիբեկյան), 2. «Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանում» (հեղինակ՝ պատմ. դիտ. թեկնածու Ար. Հակորյան), 3. «Սովետական Հայաստանը երկրի ինդուստրացման համար մղվող պայքարում» (հեղինակ՝ պատմ. դիտ. թեկնածու Վ. Մելիքսեթյան), 4. «Սովետական Հայաստանը գյուղատնտեսության կոլեկտիվացման համար մղվող պայքարի ժամանակաշրջանում» (հեղինակ՝ պատմ. դիտ թեկնածու Հ. Կարապետյան), 5. «Սովետական Հայաստանը սոցիալիզմի հաղթանակի և Ստալինյան կոնստիտուցիայի ժամանակաշրջանում» (հեղինակ՝ պատ. դիտ. դոկտոր Մ. Ադայան), 6. «Հայ ժողովրդի մասնակցությունը Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմում» և 7. «Հայաստանը հետպատերազմյան ստալինյան հնգամյակի տարիներին» (հեղինակ՝ պատմ. դիտ. թեկնածու Ար. Մնացականյան)։

Աշխատությունը պատրաստող բրիգադայի դեկավար ընկ. Մ. Ադայանը բաց անելով նիստը, ասաց, որ աշխատության 5 բաժինները քննարկվել են հեղինակների բրիգադայի և Սովետական սեկտորի նիստերում, արվել են դիտողություններ, որոնց հիման վրա հեղինակները վերանայել են իրենց բաժինները։

Աշխատության այդ 5 բաժինները տպագրվել են Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի «Տեղեկագրի» (հասարակական դիտություններ) 1950 թ. № 1, 2, 3, 4, 5, 6, 7 համարներում։ Հոդվածները ուղարկվել են նաև համապատասխան մասնագետների, որոնք կատարել են իրենց դիտողությունները։

Աշխատության քննարկմանը մասնակցեցին պատմական դիտությունների թեկնածուներ Ա. Մնացականյանը, Ե. Խալիյանը, Ս. Պետրոսյանը, Հ. Վարդանյանը, Ր. Օհանջանյանը, Վ. Ներկարարյանը, տնտես. դիտությունների թեկնածուներ Ար. Մարուխյանը, Գ. Սահակյանը և պրոֆ. Հ. Թումանյանը։

Ելույթ ունեցող ընկերները նշեցին, որ չնայած մասնակի թերություններին «Սովետական Հայաստանի պատմության ուրվագծերը» աշխատությունը նշանակալի նվաճում է։ Որպես առաջին փորձ՝ մարքսիստական լուսաբանությամբ ներկայացնելու հայ ժողովրդի սովետական շրջանի պատմությունը, լիովին արդարացնում է իրեն։ Գիրքը կազմող ընկերները խոշոր աշխատանք են կատարել փաստական հսկայական նյութը դիտականորեն ներկայացնելու և մի շարք դժվար հարցերի հաղթահարման ուղղությամբ։ Հեղինակները պատմության հարցերի շարադրման ժամանակ առաջնորդվել են մարքս-լենինյան պարտիականության սկզբունքներից։ Բաժինների հեղինակների նպատակն է եղել տալ Հայաստանի պատմությունը, կապված եղբայրական ժողովուրդների և ռուս մեծ ժողովրդի պատմության հետ։ Նրանք ճիշտ են լուծել իրենց առջև դրված հարցերը։

Չնայած այս որոշակի նվաճումներին, աշխատությունը ունի թերություններ, որոնց վերացումը անհրաժեշտ է տպագրության ժամանակ։

«Սովետական Հայաստանը գյուղատնտեսության կոլեկտիվացման համար մղվող պայքարի ժամանակաշրջանում» բաժնում կոլտնտեսային կադրերի և տեխնիկական կադրերի պատրաստման մասին քիչ է խոսվում։

«Սովետական Հայաստանի սոցիալիզմի հաղթանակի և Ստալինյան Կոնստիտուցիայի ժամանակաշրջանում» բաժնում անհրաժեշտ չափով ցույց չի տրվել 1935—41 թ թ. կապիտալիստական երկրների ճգնաժամի առանձնահատկությունները։

«Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանում» բաժնում թույլ է լուսաբանված դասակարգային պայքարը երկրում՝ ժողովրդական տնտեսության վերականգնման և խաղաղ աշխատանքների անցնելու ժամանակաշրջանում։ «Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում» բաժնում քիչ են և անհամոզիչ այն փաստերը, որոնք ապացուցում են, որ դաշնակցությունը եղել է միջազգային իմպերիալիզմի և ռուսական կոնտրռևոլյուցիոն ուժերի գործակալ։ Անբավարար է լուսաբանված 1920 թ. թուրքերի 2-րդ արշավանքը Հայաստանի դեմ։

Ոչինչ չի ասված «չեզոք գոտու» և նրա ազատագրության համար բոլշևիկների մղած պայքարի մասին. Թույլ է լուսաբանված Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը։

Այդ բաժնում գյուղացիների պայքարը դուրս է բերվում որպես պայքար միայն հողի համար, մինչդեռ գյուղացիները ոչ միայն հողի համար էին պայքարում, այլև իրենց իրավունքների համար։ Ղուկաս Ղուկասյանի մասին խոսելիս չի տրվում նրա ռևոլյուցիոն գործունեությունը։

«Սովետական Հայաստանը երկրի ինդուստրացման համար մղվող պայքարում» բաժնում լավ չի վեր հանված 14-րդ և 15-րդ պարտիական համագումարների դերը որպես ինդուստրացման և կոլեկտիվացման համագումարների։ Հեղինակը, կանգ առնելով Լենինի կոոպերատիվ պլանի վրա, չի խոսում ընկեր Ստալինի ցուցումների մասին՝ արտելային ձևի վերաբերյալ, որը բխում է ընկեր Լենինի կոոպերատիվ պլանից։

Բոլոր բաժիններում էլ անհրաժեշտ չափով խոսվում է էկոնոմիկային վերաբերող հարցերի մասին, բայց կան թվական տվյալների — տնտեսագիտական տերմինների սխալներ, որոնց վերացումը անհրաժեշտ է։ Բաժինների մեջ կապը թույլ է։

Ինդուստրացման առանձնահատկությունների մասին խոսելիս «Սովետական Հայաստանը երկրի ինդուստրացման համար մղվող պայքարում» բաժնում չի նշվում, որ Հայաստանում կային ինդուստրացման համար նպաստավոր պայմաններ։ «Սովետական Հայաստանը՝ ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում» բաժնում հենց սկզբից ասված է, որ Հայաստանը չէր կարող այլ քաղաքականություն կիրառել, քան ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։ Այստեղ չի հիմնավորվում ռազմական կոմունիզմի անհրաժեշտությունը և առանձնահատկությունները Հայկական ՍՍՌ-ում։

Քննարկման ժամանակ նշվեցին նաև տեխնիկական կարգի բազմաթիվ սխալներ ու վրիպակներ, որոնց վերացումը, գրքի վերամշակման ժամանակ անհրաժեշտ է։

Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը և ելույթ ունեցող ընկերները հավանություն տվեցին «Սովետական Հայաստանի պատմության ուրվագծերը» կոլեկտիվ աշխատությանը և անհրաժեշտ գտան աշխատությունն առանձին գրքով հրատարակել։

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Դեկտեմբերի 28-ին կայացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի Գիտական խորհրդի նիստը։

Լսվեց Գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Գ. Սահինյանի զեկուցումը, Մ. Նալբանդյանի բարձր գնահատմանն արժանացած «Աղասի հիքեանոսի» վեպի հայտնաբերման, նրա հեղինակի ճշտման և վեպի գրականագիտական արժեքի մասին։

Մ. Նալբանդյանն իր «Սոս և Վարդիթերի» կրիտիկայի» մեջ խոսելով հայ գրականության սկզբնավորման մասին, հիշատակում է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի», Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» երկերը ու «Աղասի հիքեանոսի» անունով մի անծանոթ վեպ, որը լույս է տեսել Պոլսում 1851 թ., գրված հայ հեղինակի կողմից, հայերեն տառերով, բայց թուրքերեն լեզվով։ Նալբանդյանը այդ վեպը բարձր է գնահատում, այն համարում է «հայոց կյանքից բխած մի շատ կենդանի և շատ սրտաշարժ գործ», «ազգա-